ստանան, որից ապրուստ տրուի նախարարին եւ մնացորդը մտցուի պետական դանձարան, իսկ պարագայից դժգոհ էին միշտ նախարարները, որոնք իրենց անսահման տէր եւ իշխանաւոր էին համարում կալուածներին. իսկ երկրամշակին՝ իրենց ճորտ: Այն ինչ արիական ժողովուրդը նախարարների եւ նրանց զօրականների Սեպուհ-Սպաների դէմ կռուում էր, թէ տասանորդից աւելի չի տալ, հողի տէրը մշակող-աշխատաւորն է, իսկ նախարարը արքայից-արքայի պաշտօնեայ-սպասաւորը: Քանի որ արքայից-արքայի կենդրոնական իշխանութիւնը զօրաւոր էր, հողագործը պաշտպանուած՝ տասանորդ էր տալիս, երբ նախարարները ճնշում էին կենդրոնական իշխանութիւնը, դեղացուց 20—30 եւ աւելի մեծ տոկոս էին վերցնում հողի բերքից եւ սորանից շատ անգամ մաս էլ չէին տալիս արքայից-արքայի դանձարանին:

Արեւելքի ժողովուրդը Մակեդոնացուց սպասում էր արդարադատութիւն եւ սատրապների հետ նախարարների ջնջումն, այն ինչ Ալեքսանդը հէլլէն կարգերի համաձայն իշխան-կալուածատէրերին իրենց յափշտակած հողերի տէր եւ տնօրէն կարգեց, ստրկացրեց արիական ժողովրդին, որ չէր կարող տանել այդ լուծը, որը թէեւ նա փչրեց, բայց հաստատեց պարթեւական շղթաները: